



Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարեկան 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրքում են միմիային խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ Օ Ն № 253.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Անշա Յովհաննիսեան և Աւետիս Բալայեան Ղուկասեանները յայտնում են իրանց
ազգականներին և ծանօթներին, որ ամսիս 25-ին, Վանքի մայր-եկեղեցում կը կատարվի
առաջին թանգազին հօր և երկրորդի աներոջ:

Յ Ո Վ Է Ա Ն Ն Է Ս Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն Խ Ո Ւ Ն Ո Ւ Ն Յ Ե Ա Ն Ի

քառասորեայ հոգեհանդիստը: Պատարարի սկիզբը առաւօտեան 11 ժամին:

3—3

ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Տեղական գործողների մասնակցութիւնը. —
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մի այլ միջոց.
Նամակ կիւրքից. Նամակ Փոփից. Նամակ Թմ-
բագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Սրբաբ պահանջ. Նամակ Պարսկաս-
տանից. Արտաքին լուրեր. —ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. —
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ԲՕՐՍԱ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երկրի կարօտը:

ՏԵՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Ներկայումս Թիֆլիսում տեղի ունի մի
ժողով, որ սկզբունքի տեսակետից մի հա-
մակելի և միութնական երևոյթ է ներ-
կայացնում մեր առաջ: Թիֆլիսի նահան-
գում ծառայող անտառապետները ժողով-
ված են Թիֆլիսի քննչու մի քանի կարևոր
խնդիրներ, որոնք վերաբերում են մեր
երկրի անտառային գործին: Մինչև այժմ
այդպիսի խնդիրները քննվում էին զիւա-
նատներում, անմատչելի կարիքներում,
և ոչ ոք չէր ցանկանում հարցնել տեղա-
կան գործողների և մասնագէտների կար-
ծիքը այն գործերի մասին, որոնց քննու-
թեան համար բաւական չեն տեսական
դատողութիւններ, այլ անհրաժեշտ են
իրական կեանքի ուսումնասիրութիւններ,
արդիւնագործութեան տեղական պայման-
ների հետ ծանօթութիւն:

Նորութիւն է ներկայ ժողովը մեր եր-
կրում: Նրա նախաձեռնութիւնը պատկա-
նում է անտառային զեպարտամենտի դի-
րեկտոր Նիկիտինին, որ իր անցեալում
եղած լինելով գեմաւտ վօր գործող՝ նոյն
լայն հայեցակէտը մտցնում է և իր ներկայ

պաշտօնավարութեան մէջ: Նա առաջար-
կել է Թիֆլիսի նահանգի պետական կա-
ռուածների կառավարչին հրաւիրել նա-
հանգի անտառապետներին ժողովի և այդ
ժողովում քննել հետեւեալ երեք կարևոր
խնդիրները. առաջինը՝ ի՞նչ միջոցներ պէտք
է ձեռք առնել տեղական անտառները
պահպանելու և փչացած անտառները վե-
րանորոգելու համար. երկրորդը՝ ի՞նչ ձևով
կարելի է և ցանկալի է ընդարձակել և
լայնացնել տեղական վարչութեան և ան-
տառապետների գործունէութեան սահ-
մանները, և երրորդը՝ ի՞նչ կերպ կարելի է
բարւոյցել և կատարելագործել անտառնե-
րի շահագործութեան վերաբերեալ հրա-
հանգները:

Մենք չենք մտնում այդ խնդիրների մա-
նրամասնութիւնների մէջ, այլ ընդունելով
նրանց կարևորութիւնը անհրաժեշտու-
թիւն ենք համարում շեշտել, որ նրանց
մշակութեան ներկայ ձևը մեծապէս կա-
րող է նպաստել գործի աջողութեան և
թանկալի է, որ համակրելի սկիզբը կանգ
չառնէր առաջին փորձի վրա, այլ նա ու-
նենար իր կանօնաւոր կրկնութիւնները և
դառնար մի գեղեցիկ սովորութիւն ոչ մի-
այն մեր երկրի անտառութեան այդ ճիւղի
զարգացման հարցում, այլ և բազմաթիւ
ուրիշ սպասարեգներում: Հետեւեալ քայլը կը
լինէր՝ չը բաւականանալ միայն ծառայող-
ների, պաշտօնեաների ներկայութեամբ,
այլ հրաւիրել և տեղական գործողներից
հմուտ անձնաւորութիւնների՝ յայտնելու
իրանց կարծիքը և խորհրդածութիւնները:
Որքան և բարեխղճ լինի պաշտօնեան՝ նա

դարձեալ շատ անգամ ծանօթանում է
իրերի գրութեան հետ միակողմանի կեր-
պով և անկարող է լինում տեղական ազ-
գայնականութեան շահերի արտայայտողը լի-
նել բաւականաչափ ուժեղ և հեղինակաւոր
կերպով:

Տեղական ազգայնականութեան և տեղա-
կան պաշտօնեաների այդ գործակցութիւ-
նը կարող է էական ազդել տեղական կեան-
քին վերաբերեալ խնդիրների աջող լուծ-
ման վրա և այդպիսով նպաստել թէ՛ կա-
ռավարութեանը՝ ձեռնարկելու նպատակա-
յարմար միջոցների իր վարչական գործու-
նէութեան մէջ և թէ՛ ազգայնականութեա-
նը՝ հասցնելու վարչական շրջաններին տե-
ղական կարիքների և պահանջների ձայնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

XIX դարը վերջանում է, և այժմից իսկ շա-
տերը շտապում են գրել Նրա մահադուցակը:
Թէ՛ ում կաջովի գրել մեռնող հսկայի ամբող-
ջացած, ճշգրիտ կենսագրութիւնը՝ դեռ հարց
է: Մինչև այժմ մի երկու փորձ են եղել Գե-
մանիայում, որոնք, սակայն, միայն իրանց վեր-
նագրով են ուշադրութիւն դարձնում: Թող-
նենք կենսագրութիւններն ու մահադուցակները:
Նրկու դարերի սահմանադիրին կանգնած մարդ-
կութեան հետաքրքրող միայն մեռնողը չէ, այլ
և մեռնողի յաջորդը: Վերջինիս վերաբերմամբ,
ի հարկէ, միայն գուշակութիւններ կարելի է ա-
նել, և մենք այժմից չենք կարող իմանալ, թէ՛
այդ գուշակութիւններից որին վիճակված կը լինի
մարդաբանական անսխալականութիւն: Այսքանը
կարելի է ասել, որ այդ գուշակութիւնների մէջ
կան և յուսահատականներ, թէ՛ և մեծ մասը
վարդագոյն տեսիլների նմանութիւնն ունի: Տե-
սակէտը կարկած է այն մարդուց, որ նայում է
ապագային: Արդիւնագործութեան, տեխնիկայի
ներկայացուցիչները հրաշալի յաղթանակներ են
նախառնում: Բայց, օրինակ, ինչ կարող է
գուշակել մի բանաստեղծ: Ահա, օրինակ, ֆրան-
սիական յայտնի բանաստեղծ և ակադեմիկ Սիւ-
լի Պրիւդոմ նոյնպէս խօսում է ապագայ դարի

մասին. «Русскія Вѣд.» լրագիրը այսպէս է ձևա-
կերպում բանաստեղծի գուշակութիւնը:

Իբրև բանաստեղծ՝ նա ամենից առաջ հե-
տաքրքրված է գեղեցկութեան հարցով, և վեր-
ջումբով ժամանակակից ձգտումները՝ գալիս
է այն եզրակացութեան, թէ՛ գեղեցկութիւնը
դատաւարութեամբ է ոչնչացման: Արդիւնագոր-
ծութեան հրաշալիքները ժամանակակից մարդ-
կանց մէջ դարձան են յարուցանում, բայց
ոչ իբրև գեղարուեստի նմուշներ, այլ իբրև
գործնական հարցերի լուծում: Այն ոգին, որ
տարածվել է մարդկութեան մէջ արդիւնագե-
րական աշողութիւնների ազդեցութեան տակ՝
մտնում է ամեն բանի մէջ և սկսում է ար-
տայայտվել կանացի գեղեցկութեան վրա ու-
նեցած հայեացքի մէջ: Ժամանակակից կանա-
ցի զգեստների և այլ մանր երկոյթների մէջ
Սիւլի Պրիւդոմ տեսնում է մի ապագայ, որ
կանացի գեղեցկութիւնը նուազանցում է:
Այդ նուազանցման տեսլանքի մասին, ֆրանսիա-
կան բանաստեղծի կարծիքով, միշտ կը շա-
րունակվի, և գեղեցկութեան ոչնչանալու հետ
XX դարում կը փոխվի և կնոջ սոցիալական
դերը: Վնոյ արտաքինը աւելի և աւելի պի-
տի մօտենալ տղամարդու տրպիւն, և սակաւ
առ սակաւ կինը կընտրէ իր հոգու համար մի
կուլտուրա և, հետևաբար, մի հոգի, որ կը հա-
մապատասխանէ իր արտաքինին: Ուստի նա
պիտի կատարէ այն հասարակական պաշտօն-
ները, որոնք այժմ տղամարդկանց ձեռքին են:
Ներկայումս ենք, թէ՛ ինչ կը լինի այն ժամա-
նակ բանաստեղծների գրութիւնը: Բայց չը կայ
չարիք, որ բարիք չառաջացնէ: Գոնէ այն ժա-
մանակվա հասարակութիւնը ազատված կը լինի
այն մարդկանցից, որոնք բէկախներ չառարկայ
են դարձնում իրանց գեղարուեստութիւնը, որոնք
իրանց մտաւոր սնանկութիւնը ծածկում են
գեղարուեստ, էսթետիկա և այլ համաձայն ջաղ-
ցրանչիւն խօսքերով:

*

Բազմաթիւների դրամատիկական տեսլանքը շատ
անգամ են նկարագրվել, շատ անգամ են ծաղ-
րի և անարդարների ենթարկվել, բայց ոչ մի ան-
գամ այնպիսի վառ գոյներով չեն երևան եկել
աշխարհի առաջ՝ ինչպէս փետրվարի 16-ին,
երբ ածուրդով էին տրվում Բրիւլ-Էնթաթի նաւ-
թային հոդերը: «Восстѣ» լրագրի մէջ գտնում
ենք այդ տեսլանքը իրարանցման մի փոքրիկ
պատկերը: Հաւաքվել են բոլոր ազգերի ներկայ-
ացուցիչները. հրպիսի յուզումներ, հրքան տեն-
չանքներ: Նաւթային ֆոնտանները այնքան զոր-

դեռ ոչ մի անգամ չեն լսել, թէ՛ ինչ կայ չը կայ
այն կողմերը:

—Մի քիչ տարօրինակ հարց են տալիս... ես
հօ չեմ կարող միանգամայն պատմել ընդ ամեն
բան. չը գիտեմ, թէ՛ ինչ է հետաքրքրում ընդ
գուցէ քաղաքականութիւնը:

Հրէան լուռ մնաց:

Կարծելով, թէ՛ հիւսիս, շատ ուրիշների նման,
հետաքրքրված է քաղաքականութեամբ, առանց
սակայն հասկանալու, թէ՛ ինչ կը նշանակի քա-
ղաքականութիւնը բառը՝ սկսեցի փոխ ասողի
նման—որովհետեւ շատ էի կրկնել նոյն բանը—
պատմել Նիւթային քաղաքական գրութեան մա-
սին, մեր գրութեան մասին և այլն, բայց հրէան
զայարվեց անհամբեր կերպով:

—Նրկի այս չէ հետաքրքրում ընդ, հարցրի ես:

—Նրբէք այդպիսի բաների մասին չեմ մտա-
ծել,—պատասխանեց նա անկեղծօրէն:

—Ա՛, հիմա գիտեմ, թէ՛ ինչ է ուղածը. ան-
շուշտ ուղած են իմանալ, ինչպէս են հրէաների
բաները, այնչէր է թէ՛ չէ առեւտուրը:

—Նրանց բաները աւելի լաւ են քան իմ:

—Ճիշտ է: Որ այդպէս է՝ ուրեմն ուղած են
իմանալ, թէ՛ իմանալ է արեւօք այժմ մեղանում
ապրուստը, ինչ գիտեմ կան շուկաներում, ինչ
արժեն ալիւրը, միւսը և այլն:

—Ինչպէս պէտք է այդ, երբ որ այստեղ ոչինչ
չէ կարելի գտնել, թէ՛ կողով այստեղ հողի գին լի-
նէր:

—Եւ աւելի ճիշտ. բայց վերջ ի վերջոյ ինչ է
ախր ուղածը:

—Բայց որ ինքս էլ չը գիտեմ, պարոն, թէ
ինչպէս ասեն: Գուր ես իմ պարոնս. շատ անգամ
այնպէս եմ ինձ ու ինձ մտածում, մտածում, որ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ե Ր Կ Ի Ր Կ Ա Ր Օ Տ Ը
(Աղամ Երմանակու)

Այժմ ես կարող էի աւելի ուշադրութեամբ
գննել նրան: Հրէայ ցեղի բոլոր ամենատիրա-
կան գծերը կարծես մարմնացել էին կողքին
նստած կերպարանքի մէջ,—և՛ հաստ, կրպակա-
նման ու փոքր ինչ դէպի մի կողմ ծռված թիւթ,
և՛ թափանցող, բազէի աչքեր, և՛ հասն անցած
վարունգի գոյնով ցցած միւրուք, և՛ վերջապէս
կոշտ մազերով եզերված ցածիկ ճակատ,—այդ
բոլորն ունէր իմ հիւրը, բայց, զարմանալի բան,
այդ բոլորը միասին առած՝ վատ տպաւորութիւն
չէր գործում ինձ վրա, թերեւ չնորհիւ արտա-
յայտութեան նրա մաշված դէմքի, որից մի տե-
սակ անկեղծ պարզութիւն և մտերմութիւն էր
բուրում:

—Ասա տեսներ, հրեանցիկ ես, ինչպէս է
անունդ, ինչ ես անում այստեղ և ինչ ես ու-
ղում իմանալ ինձանից:

—Անունս Սրուլ է, պարոն. Լիւբարտովիցն
եմ. գուցէ ողորմած պարոնը գիտէ, որ դա հա-
մար Լիւբլինի կողքին է. ասենք մեզմում
մարեա Լիւբլինի կողքին է. ասենք մեզմում
բոլորը կարծում են թէ Լիւբլինից շատ հեռու է.
եւ էլ առաջ այդպէս էի կարծում, բայց այժմ,
—աւելացրեց նա առանձին շեշտով,—մենք գի-
տենք, որ Լիւբարտովը Լիւբլինից շատ մօտիկ է,
գրեթէ կպած:

—Աղաւթ է այստեղ ես:

—Շատ վաղուց, երեք տարուց մի բան պա-
կաս:

—Ասեմք, այդ շատ էլ վաղուց չէ. այնպէսնե-
րը կան, որոնք 20 տարի այստեղ են, իսկ ճա-
նապարհին մի վիշտացի ծեղովի պատահելի, որ
մօտ 50 տարի է ինչ ապրում է այստեղ. այ՛
նա ճիշդ որ վաղուց է այստեղ:

Սակայն հրէան տաքացաւ:

—Նրանց վաղուց լինելն ու չը լինելը չը դի-
տեմ. բայց գիտեմ, որ ես շատ վաղուց եմ այս-
տեղ:

—Նրկի մենակ ես, որ ժամանակը այդքան
երկար է թուում ընդ:

—Կինս էլ է հետս, մի հատ էլ աղջիկ երե-
խայ. չորս երեխայ էին, երբ որ գալիս էի այս-
տեղ, բայց այստեղի ճանապարհը այնպիսի ճա-
նապարհ է—Տեքը փրկէ, ազատէ,—որ ամբողջ
մի տարի գալիս էինք. պարոնը չը գիտէ, թէ՛
ինչ բան է է տապը... Նրբէ երեխաս միանգա-
մից մեռան մի շաբաթում, մի և նոյնն է թէ՛
միանգամից: Նրբէ երեխաս, հեշտ է ասելը...
Թաղելու տեղ անգամ չը կար, որովհետեւ այս-
տեղ մենք հանգստարան չունենք... Ես հօւսիտ
եմ,—աւելցրեց նա ցած ձայնով,—պարոնը գի-
տէ ինչ է նշանակում այդ... Օրէնքը պահպա-
նում եմ... և Աստուած այսպէս պատժում է ինձ...
Եւ յուզված լսեց:

—Սրիւնիս, այդպիսի գրութեան մէջ դժուար
է մտածել այդ տեսակ բաների մասին, չէ որ
մի և նոյնն է, ամեն տեղ Աստուծո հողն է, փոր-
ձեցի մի կերպ մխիթարել նրան, բայց հրէան
տեղից վեր թուա խոսքով չէր պէտք:

—Աստուծո հող, ինչպէս թէ՛ Աստուծո հող, ինչ
ես ասում, պարոնս Սա չան հող է: Թիւ, թիւ:

Աստուծո հող: Այդպէս բան մի ասի, պարոն,
ամօթ է, պարոն: Աստուծո հող, որ երբեք չէ
հալւում: Սա նշուած հող է: Աստուծո չէ ու-
ղում, որ այստեղ մարդիկ ապրեն, եթէ նա այդ
ուղէր՝ այստեղ այսպէս չէր լինի: Անիծեալ,
պիղծ հող: Թիւ, թիւ:

Եւ սկսեց թեք չորս կողմը և ոտները խփել
գետնին: Սղմած բերանով և կծկված մատներով
սպառնում էր նա Ճակատակի անմեղ հողին,
չնչում էր ինչ-որ հրէական նշովներ, մինչև
որ ուժասպառ աւելի շուտ ընկաւ, բան նստեց
իմ կողքի աթոռի վրա:

Բոլոր արտաբանները, առանց խորութեան
ազգի և կրօնի, չեն սիրում Սրբերը. բայց, ինչ-
պէս երևում էր՝ այդ մտղեանդ խառնիչը ա-
նշնդունակ էր մի բան ասել կիսով չափ: Սպա-
նում էի մինչև հանգստանալ: Խիստ դպրոցում
կրթված հրէան շատ շուտով ուղբի եկաւ, շատ
շուտով զսպեց յուզմունքը և, երբ մի քայլ անց,
ես հարցադարձը նայեցի աչքերին՝ նա իսկոյն
պատասխանեց.

—Թող ների ինձ պարոն: Ես ոչ ոքի հետ
այդ բանի մասին չեմ խօսում. ասեմք ով կայ
այստեղ, որ մարդ հեռը խօսի:

—Հրէաներ քիչ կան այստեղ, ինչ է:

—Նրանք հրէաներ են միթէ, պարոն. սրանք
այնպէս են, ինչպէս այստեղացիք... ոչ ոք օրէն-
քը չէ պահպանում:

Սակայն վախճալով, որ նորից բռնկի՝ չը
թողեցի խօսքը վերջացնել. վճռեցի կարճ կտրել
խօսակցութիւնը և ուղղակի հարցրեցի, ինչի մա-
սին էր նա ուղում խօսել ինձ հետ:

—Վուզէի իմանալ, ինչ է լավում մեր կողմե-
քը, պարոն: Այսքան մարդ է այստեղ եւ և

գույն են ածուրդի ներկայացուցիչներին, որ նրա-
րանք ամեն չափ ու սահման կորցրած՝ աւելա-
ցնում են գնները, այնպէս որ, ինչպէս ասում է
լրագիրը՝ շատերը Բիբլ-Հէյթսթիմով իրանց գե-
րեցմանը կը դառնան: Սակայն հետաքրքրականը
այն է, որ այդուհի, այդ յոյզերի աշխարհում,
ամենից շատ աչքը է ընկնում ինտելիգենցիան:
Պարագմուտով և կոչումով վաճառականները
աւելի սահմանափակ են, քան յուզվում, մինչ-
դեռ ինտելիգենտները, այսինքն նրանք, որոնք
գիտութիւն են ճաշակել՝ կայուն դուրս են գա-
լիս, յուզվում, կուռնում են, որպէս զի չը լինի
թէ համեղ պատահները ձեռքից գնան: Հիա-
ցեք այս պատկերով:

Ահա, օրինակ, մի լինձենէր, որ ամենա-
փաղուն յոյսեր էր տալիս՝ երբ ուսանող էր
և այժմ շարունակում է իրաւունք յոյսեր տալ
իրեն լինձենէր: Քրտնած, ամբողջապէս կար-
մբած անտանելի խեղդով օդից և յուզմուն-
քից, նա անհամբեր դէս ու դէն է ընկնում
դաշիճի մէջ, և նրա դէմքը վրա, որ մի ուրիշ
ժամանակ խեղդ և արտաբայտիչ է՝ այժմ ոչ
մի բան չէ գործած, բայց ինքնին խռովու-
թիւնից և անապոյտութեան երկիւղից: Ահա
երկու հոգի, երկու, չայր ու որդի, որոնք
կանգնած են մի տեղ և ուշադրութեամբ ա-
կանջ են դնում յայտարարութիւնների ըն-
թերցանութեան: Հայրը՝ արդէն հասակն ա-
ռած մարդ է, Բագրի տիպիական նաւթա-
գործ: Որդին՝ նոր աւարտած ուսանող, որի
դէմքից նոյն-իսկ դեռ էր կարողացել իշխել
երազողի արտաբայտութիւնը: Նրանք առա-
ջարկել են բաւական խոշոր գններ հինգ թէ
վեց կտոր հողի համար, և հիմա երկուսն էլ
ակնաւ ինչ դնում, թէ արդեք մէկը չի առա-
ջարկել աւելին: Հայրը բոլորովին հանդիսու-
կերպով գրում է հետզհետէ յայտնվող գները
և քայքայ խոսակցութիւն է վարում իր ծա-
նոթների հետ: Որդին, երևում է, ամբողջովին
այրվում է անհամբերութիւնից և երկիւղից,
ամենաանգղով կերպով ձմրում է իր դժբախտ
գլխարկը և շարունակ յուզված նայում է իր
հորը:

Մեր ժամանակի ճայրերն ու որդիները: Յի-
շնձ էր Տուրգենևիկ հայրերն ու որդիներն:
Որքան քիչ ժամանակ է անցել, բայց սրբախի
տարբերութիւն հայրերի ու որդիների մէջ...

Մ Ի Ա Յ Լ Մ Ի Ջ Ո Յ
(Նամակ գրողից)

Կարգաւ գրեք չը կայ... լսվում է ամեն
գիւղում, ուր որ փորձում էք իմանալու, թէ
ինչու գիւղացիները գոնէ ձեռնաւայ ձիգ գիշեր-
ները չեն ուզում ընթերցանութեամբ պարագայել:
Մի և նոյն ժամանակ նկատում էք, թէ սրբախի
սիրով ու հետաքրքրութեամբ են չըջապատում
ձեզ, երբ մի գիրք կամ լրագիր էք կարդում և
մատչելի լեզուով բացատրում նրանց: Ինչ հար-
ցեր ասէք, որ չեն թափում ձեռք գլխին և որքան
բազմակողմանի ու գործնական են դրանք...

Գիրք չը կայ, կասենք և մենք դրանց հետ:
Թերթները մեր գրքերը, քանիսն են դրանցից
գիւղացու համար, գիւղացու լեզուով, գիւղացու

Ուրիշկաս, կնոջն անունն է այդ, հարցնում է՝
«Սուրբ, ինչ է պատահել ձեզ: Իսկ ինչ կարող
եմ ես նրան ասել, երբ որ ինքն էլ չը գիտեմ,
թէ ինչ է պատահում ինձ: Մարդիկ որ իմանա-
լին՝ գուցէ ծիծաղէին էլ իմ վրա, աւելացրեց
նա, կարծես դիտելով, թէ հօ ես էլ չեմ ծիծա-
ղի վրան:

Սակայն ես չէի ծիծաղում: Նրա խօսքերը հե-
հետաքրքրութիւնս շարժում էին. պարզ էր, որ
նրան ճշնում էր ինչ-որ մի բան, որի մասին
նա չէր կարողանում հաշիւ տալ ինքն իրան և
որի արտաբայտելու աւելի ևս դժուար էր նրա
համար, որովհետև լեհերէն էր խօսում ինձ հետ,
իսկ լեհերէն նա շատ վատ գիտէր: Նրան օգնե-
լու համար, հանգստացրի նրան ասելով, որ չը
վազի, որովհետև պարագմուտը շտապողական
չէ և ամենին չի խանգարվի՝ եթէ մէկ-երկու
ժամ խօսենք և այլն: Հրեան շնորհակալութիւն
յայտնեց ինձ հայեցողով և փոքր ինչ մտածե-
լուց յետոյ սկսեց ինձ հետ այսպիսի մի վրայ:

—Նրբ է պարոնը դուրս եկել Վարչապետից:
—Հին տոմարով՝ ապրիլի վերջին:
—Ե՛, այն ժամանակ ցուրտ էր այնտեղ թէ
տաք:

—Բոլորովին տաք. ճանապարհի սկզբին ա-
մառվայ չորերով էի:
—Այ, տեսնում ես, պարոն, իսկ այստեղ
ցրտից մարդ գոյուկ է:
—Մտաւոյն ես, ինչ է, որ այսպիսի մեղմում
արտերն արդէն ցանկած են լինում և բոլոր ծա-
ւերը՝ կանաչ:
—Կանաչ, ուրախութիւն փայլեց Սուրբի աչ-
քերում, հա, հա, կանաչ, իսկ այստեղ ցուրտ
ու ձիւն:
Այժմ արդէն գիտէի, թէ ինչ է ուզածը, բայց

ցաւերից: Անշուշտ քերք: Իսկ եղածներն էլ
փոխանակ նրա ձեռքը հասնելու, նրա ական-
ջին դիպչելու՝ կամ մնում են դիզված գրավա-
ճառանդներում ու հեղինակներին մօտ, կամ
տարածվում են քաղաքներում, ուր առանց այն
էլ կայ թատրոն, գրադարան, ժողովարան, երե-
կոյթներ, ինտելիգենցիա, կեանք... Ի հարկէ հա-
մեմատական չափով: Խեղճ գիւղացուն մնում է
կամ գիրք քաղաքից բերել տալ, որ ի հարկէ
շատ դժուար է, կամ պանդուխտ որդուց ու
եղբորից պատահաբար ստացածով գոհ լինել:
Նա սիրում է գիրքը, սիրում է իր հոգու, իր
դաւակի չափ, թէկուզ անգրագէտ էլ լինի: Մեծ
ինտելլով է պահպանում նա հօրից, քանայից
կամ տիկացուց ստացած ժամագրքի կիսատ-
պուտ կտորները, պատահաբար ձեռքն անցած
գրքերը՝ մի օր իր որդուն տալու համար: Զէ որ
մարդիկ այդտեղ են սովորում աշխարհի շարն
ու բարին, և նա առանց ինայելու գրքի հա-
մար կը տալ 20—50 կ, դեռ էլի աւելի, մի-
միայն հարկաւոր է գիրքը նրա մօտ տանել:

Սրա համար «Մշակը» շատ միջոցներ է առա-
ջարկել. գրանցել միւսն էլ, իմ համեստ կարծի-
քով չըջող դրամաճառները պիտի հա-
մարել: Գիրքից գիւղ չըջելով և գրքեր վաճա-
ռելով՝ այդ մարդիկ նախ մեծ քանակութեամբ
գրքեր կը տարածեն գիւղական ազգայնակու-
թեան մէջ և զարկ կը տան նրա ընթերցանու-
թեան գործին և երկրորդ՝ տպագրած գրքերը կը
սպառեն:

Այդպիսի մի փորձ եղաւ Ելմիսանի գաւա-
ռում յիշատակի արձանի Լեւոն վարդապետի
ձեռքով, որ մեծ աշդուրթեամբ էր առաջ դը-
նում. բայց խեղճի սկսած բարի գործը իր հետ էլ
մեռաւ: Այդպիսի գրավաճառներ ես տեսել եմ
նախ հարաւային Ռուսաստանում, որոնք անգը-
նահատելի ծառայութիւն են մատուցանում ի-
րանց գիւղացի տղէտ եղբորը: Մենք էլ փոր-
ձենք:

ՆԱՄԱԿ ԿԻՆՎԻՑ

Փետրվարի 10-ին

Թէ որքան Կինվի հասարակութիւնը, սակաւ
բացառութեամբ, շատ քիչ ծանօթ է Կովկասին
և նրա ազդութիւններին՝ ցոյց տուեց Կինվում
առաջին անգամ տրված վրաց երկրորդ Ղեռ-
յուզիւրին էին զարթոյնքով քաղաքացիների մէջ,
առաջին օրերը շարունակ մարդիկ էին հաւաք-
վում աֆիշաների մօտ և հետաքրքրութեամբ
կարդում էին:

Երեկոյթը տրվում էր Պետերբուրգից հրաւիր-
ված երաժիշտ Բալանիլովսկիի ղեկավարու-
թեամբ և նրա անուամբ, իսկ հասոյթը Կինվի
վրաց ուսանողութեան օգտին էր: Ուսանող-կա-
ռավարիչները շատ էին վախում, որ երեկոյթը
աշդուրթիւն չի ունենայ, որովհետև ժամանակը
կարճ էր և նպատուղ պայմանները սակաւատ

ստուգելու համար՝ լեզուի. հրէան, ինչպէս երե-
ւում էր՝ կենդանացել էր:

—Խնդրեմ ասես, պարոն, մեղմում կայ հիմի...
բայց այ տես, արդէն չը գիտեմ թէ ինչպէս են
ասում, լեհերէնը մոռացել եմ, բացատրում էր
նա ամաչելով, կարծես թէ երբ և իցէ լեհացել
էր լեհերէն լեզուն, այսպէս սպիտակ-սպիտակ
բաններ են, սխեռի նման, բայց ոչ սխեռ, ա-
մառը շատ են լինում տների կողքին մարգերում,
այսպէս մեծ փայտերի վրա...

—Լրբի:
—Հա, հա, լրբի, լրբի, կրկնում էր նա ինքն
իրան մի բանի անդամ, կարծես թէ ուզելով
ընդ միջոյ դրոյնքով այդ բառը յիշողութեան մէջ:

—Ի հարկէ, կայ և շատ շատ, իսկ այստեղ
միթէ չը կայ:

—Այստեղ: Ամբողջ երեք տարի մի հատիկ էլ
չեմ տեսել, այստեղի սխեռը հօ այնպէս է, որ
մեղմում, հեռի լսողից, միայն... միայն...

—Խոզերը կուտեն, վրա գցեցի ես:
—Հա, հա, բայց այստեղ գրուանքով են ծա-
խում և այն էլ միշտ ձեռ չէ ընկնում:

—Միթէ այդքան լրբի սիրող ես:
—Ձէ թէ սիրում եմ, այլ այնպէս՝ ինքս ինձ
շատ անգամ մտածում եմ, թէ վատ չէ, օրինակ,
որ կարծես թէ անտառ է բուսած տան չորս
կողմը: Այստեղ ոչ մի բան չը կայ:

—Իսկ հիմի՝ նորից սկսեց նա՝ հիմի ասա
տեսներ, պարոն, ձեռները դեռ լինում են
մեղմում, այ այսպիսի՝ մատի վրա ցոյց տուեց
—միտրադիոն ճնշողներ, որոնք անուրը նոյն-
պէս մոռացել եմ: Առաջ շատ կար այդ ճնշ-
ղողները: Նրբ որ լուսամուտի մօտ ազօքը էր
անում՝ շատ անգամ մըջիւնի նման հաւաքվում
էին գլխիս: Բայց ո՞վ էր այնտեղ նրանց մտիկ

էին: Սակայն գործ դրած մեծ եռանդը և վրաց
ընտանիքների ցոյց տուած սիրալիր աջակցու-
թիւնը ամեն բանի յաղթանքին ու երեկոյթը նիւ-
թական կողմից մեծ աշդուրթիւն ունեցաւ. ընդ-
հանուր մուտքը 2,200-ից աւելի էր, իսկ ծախսը
մօտ 1500 բուրլի: Նրաժշտական բաժինը գովել
չէ կարելի, որովհետև 3 օրում դժուար էր ամեն
բան կարգին պատրաստել, մանաւանդ որ ու-
սանողական օրկեստրը չէր կարողանում լաւ
հասկանալ անձանթի դիրիժօրի բացատրութիւն-
ները:

Երեկոյթին մեծ կենդանութիւն տուին կով-
կասեան պարերը, որոնցից ի հարկէ զեղզին-
կան ուշադրութեան արժանի ամենազարմար
կան շատարակութեան վրա տպաւորու-
թիւն թողեց մի հայ ուսանող լեզվիական խն-
ջարներով, որ նորութիւն էր կիեկցիների հա-
մար. վրացի ուսանողներից մի քանիսը պարե-
ցին արեստուրի և լեկուրի. կովկասեան պարե-
նի մոռացրին եւրօպական պարերը, և հասարա-
կութիւնը անդադար պահանջում էր, որ ազգայ-
ին պարերը կրկնվեն:

Տեղական լրագիրները մեծ համակրութեամբ
վերաբերվեցին երեկոյթին և ցանկութիւն յայտ-
նեցին, որ այդպիսի երեկոյթները շուտ-շուտ լի-
նեն. քաղաքում էլ խօսակցութեան նիւթը վրաց
երեկոյթին է:

Առաջին փորձից խրախուսված՝ վրաց ուսա-
նողութիւնը մտադիր է ամեն տարի այդպիսի
երեկոյթ սարքել, իսկ վրացիների աշդուրթիւնը
սիրտ տուեց և փորձարթիւ հայերին. եթէ միջոց-
ները մեղ ներեն՝ մենք էլ մտադիր ենք սարքել
հայկական երեկոյթ, աւելի ճիշտ գաղափար տա-
լու համար ուսու հասարակութեան հայերիս մա-
սին, քան այն՝ ինչ կազմում են Կովկասից ու
Նոր-Նախիջևանից եկող հայ վաճառականներով:
Շատ ցատկ է, որ վրաց ուսանողութիւնը
չը համաձայնեց հայ ուսանողութեան հետ միա-
սին տալ ոչ թէ վրաց, այլ կովկասեան երեկոյթ:
Այդ մասին հայ ուսանողութեան կողմից առա-
ջարկութիւն եղաւ, որ, սակայն, մի քանի պատ-
ճառներով չընդունվեց: Հայերս լաւ վերաբերվե-
ցինք. նոյն իսկ գանձակեցին հայ վաճառական
պ. Արչակ Մնացականեանցը 30 չիլ լաւ գինի
ուղարկեց նուէր յօգուտ վրացի ուսանողութեան:
Շուտով մի ուսու օրերը Բալանիլովսկիի նախա-
ձեռնութեամբ և սիրողների մասնակցութեամբ,
տրվելու է ներկայացում յօգուտ հայ ուսանողու-
թեան. սկզբնական ծախսերի համար յոյս ունենք
նպաստ ստանալ պ. Արչակ Մնացականեանցի:
Նուէր

ՆԱՄԱԿ ՓԹԻՑ

Փետրվարի 20-ին

Անգլիական և իտալական չորհրդակցութեամբ դար-
ձեալ հաւաքվեցին մեր նաւահանգստում մար-
գանցի հանքի արտահանութեան համար, որի
պահանջը օրէցօր աճում է: Չը նայած մեր նա-
ւահանգստի փոքրութեան, որ հազիւ կարողա-

անում: Ո՞վ կը հաւատար, պարոն, թէ մէկ
օր կը մտածեմ նրանց մասին: Բայց այս-
տեղ՝ այստեղ աղուաններն էլ ձեռք չեն մնում,
այդ մանր ճնշողները հօ իսկի չեն կարող դի-
մանալ, իսկ մեղմում դեռ կան երեւի, չէ, պա-
րոն, կան...

Բայց այժմ ես նրան չը պատասխանեցի, այ-
նքան էլ անկասկած էր ինձ համար, որ այդ
մեր հրէան, այդ մոլեռանդ խաւիքը, հայրե-
նիքի կարօտն էր քաշում այնպէս՝ ինչպէս և
էր, որ մենք երկուսս էլ հիւանդ էինք մի
նոյն հիւանդութեամբ: Տառապանքի ընկերակցի
այդ անախկնակ դիտող ստատիկ խաղաղատե-
րեց ինձ, և ես, ընդունով նրա ձեռքը, այժմ ար-
դէն ինքս սկսեցի հարցեր տալ նրան:

—Ուրեմն դրան մասին էիր ուզում խօսել ինձ
հետ: Ուրեմն դու չես մտածում մարդկանց մա-
սին, քո դասը վիճակի մասին, քեզ ճնշող աղ-
բատութեան մասին, այլ կարծում եմ հայրենի-
քի արեւին, օդին, հողին... Մտածում ես դաշ-
տերի արօտների և անտառների մասին, նրան-
ցում բնակող կենդանի արարածների մասին,
որոնց քո խղճով կենքեր ընթացեալ նոյն իսկ
ժամանակ չես ունեցել լաւ ճանաչելու, և այժմ
երբ այդ քաղցր պատկերները չքանում են քո
յիշողութիւնից, վախենում ես այն դատարկու-
թիւնից, որ կը շրջապատի ձեզ, այն օրը վիճա-
կից, որի մէջ կ'ընկնես, երբ բոլորովին ջնջվի
թանգազին յիշատակները: Ուզում ես, որ ես
յիշեցնեմ քեզ այդ պատկերները, թարմացնեմ
յիշողութիւններդ, որ քեզ պատմեմ, թէ ինչ-
պէս է մեր երկրի...

—Հա, պարոն, հա, դրա համար եմ եկել
այստեղ... և սքսեց ձեռքս ու ժպտաց ուրախ,
ինչպէս երեխայ:

Նում է տեղադրել միայն երեք չորհրդակ
հիւսիսային պատի մօտ՝ այնու ամենայնիւ
մարգանցի արտահանողները մէկը միւսի յետե-
ւից չորհրդակներ են պատուիրում, որոնք զալիս
են այստեղ և մնում կանգնած բէյդի վրա՝ սպա-
սելով հերթին: Մի կողմից այդ հանքի պահա-
նը, միւս կողմից էլ այն հանգամանքը, որ ամ-
սիս 13-ին երկաթուղիների վարչութիւնը իջե-
կապէկ, Ձիատուրա կայարանից մինչև Շօրա-
պան, մի փոքր կենդանութիւն տուեց մարգա-
նեցի արտահանութեան գործին: Սակայն չորհ-
րից, որին ենթարկվում են արտահանողները՝
երբեմն ուրիշ հետեանքներ է ունենում. բէյդի
կանգնած չորհրդակները շարունակ ենթակա են
ալիքների և հողմի քմահաճոյքին:

Ամսիս 16-ից սկսած մինչև այսօր մըրիկը
ձիւնախառն անձրեւի հետ չէ դադարում, իսկ ե-
րէկ, ամսիս 19-ին, այնպիսի փոթորիկ բարձրա-
ցաւ, որ չորհրդակներից երկուսի խարխիւները
կտրուեց և դուրս նետեց փոք, իսկ միւս չորհ-
րակները օրհասական ճգնաժամով մէջ էին և հա-
րաւորութիւն չուէին խարխիւն հանելու և ծովի
նիւսը մղվելու, որ աւելի ապահով է բան ափե-
րի մօտ: Նրկու չորհրդակներն էլ ափից հինգ սա-
մէնաչափ հեռու խոր նստած են աւաղի մէջ,
իսկ թշուառ նաւատորմները և նաւապետը շա-
րունակ մըրկալից ծով վրա թափառում են
մակոյկով և այդքան փոքր տարածութեան վրա
իսկ վտանգի ենթարկում իրանց անձը. օրինակ՝
այսօր նաւապետը նաւակի ցնցումից ընկաւ
ծովը և չնորհիւ նաւից ափը ձգված պարանի
միայն կարողացաւ ազատվել:

Այդ չորհրդակները դեռ երկար նստած կը մը-
նան աւաղի վրա, մինչև դանաղան անձնաւո-
րութիւններից և ընկերութիւններից մինի հետ
պայման կը կապեն՝ հանելու նաւը դէպի ծով:
Իսկ այս բանն անշուշտ առանց մեծ ծախսերի
չէ կարող լինել, և նայած երկու չորհրդակների
գործիքան՝ առնուազն հարկաւոր կը լինի 25—
40 հազար բուրլի: Սա մի այնպիսի խոշոր հան-
գամանք է, որ կարող է ընդ միշտ սպանել Փո-
թիկ բարգաւաճումը՝ արդիւնաբերական կեն-
տրոն լինելու տեսակէտից, որովհետև նաւահա-
նգստի անյարաբարութիւններից առաջացած այդ
վնասները անշուշտ կազդին ճանապարհածախսի
բարձրանալու վրա և եթէ այժմ իւրաքանչիւր
տօնը տեղափոխել արժէ 12—14 չիլինդր՝ աչ-
նուհետ կը դառնայ 18—22 չիլինդր, որպիսի
վճարը մարգանցի գործում մի մեծ խոչընդոտ
պիտի հանդիսանայ:

Բաթումի մի քանի վաճառականներ, որոնք
նոյնպէս պարագում են մարգանցի գործով
անցեալ ամսին խողիր բարձրացրին արտահա-
նութեան կենտրոնը մարգանցի համար Բաթում-
ը նշանակել և դրա համար գրադրութիւններ
արդէն սկսված են, իսկ «Черноморский Вестник»
լրագիրը, ջերմ աջակցութիւն և համակրանք
ցոյց տուեց այդ գործին, չը նայած բազմաթիւ

—Լսի՛ր ուրեմն, եղբայր...

Նա աւանջ էր դնում ինձ Սուրբ, ամբողջապէս
խելք դարձած, բերանը բացած, աչքերը վրա
յառած, այդ հայեացքով նա բորբոքում էր ինձ
և զրդուում, հանում էր ինձնից խօսք խօսքի
յետևից, յափշտակում էր խօսքերս ազահ ծառա-
ւով և խորում նրանց իր ջերմ սրտի յատա-
կում... Խորում էր այնտեղ, անկասկած, որով-
հետև երբ վերջացրի պատմութիւնս՝ «վայ ինձ,
վայ ինձ», հառաչեց ինձ և խոշոր արցունքներ
դրաց նրա չէկ միջուկը, և խոշոր արցունքներ
մաքրի արցունքներ հոսեցին ներքե նրա մալ
ված դէմքի վրա... Նա դեռ երկար հեկեկում էր
ծերունի հրէան, և ես լալիս էի նրա հետ միասին:

Շատ ալիքներ են փոխվել այնուհետև սառ-
նաշուր Նիւայի մէջ, և անշուշտ շատ մարդկանց
արցունքներ են հոսել վշտահար դէմքերի վրա:
Մինչև օրս սակայն, թէ շատ ժամանակ է անցել
այդ դէպքից՝ գիշերալին խաղաղութեան մէջ
գիշերալին անուր ժամին, յաճախ կանգնած է
աչքիս առջև Բաղդադի արձանակերպ դէմքը
անհուն կակիժի վրդովով պայծառացած և նրա
կողքին միշտ երևում է Սուրբի զեղնած, խորշո-
ւած և մաքուր արցունքներով ողողված երեսը:
Նա երբ երկար դիտում եմ այդ դիւրեպային ու-
րուականները, շատ անգամ, թում է ինձ, տես
նում եմ, թէ ինչպէս շարժվում են հրէայի դոյր
դոյուն ու գունաթափ շրթունքները և մի մեղմ
յուսահատ ձայն չըջնում է իմ կողքին. «Օ՛վ ի-
նձ, ինչու այդպէս անողորմած ես դէպի քո
ամենահաւատարմ որդիներից մէկը...»

Տ. Յովհաննիսեան

անյարաբար
գամ կը ձե-
րագրեց ի-
նտիկան
հանգիստը
հրաժեշտ
արտաքին
Յովհանն
գրութիւն
Փօթիկ կ
Եւրօպայ
հանգիստը
երբ ընտի

անյարժարութիւններն, որոնց մասին այլ ան-
գամ կը յիշատակեմ, գեղեցիկ գոյններով նկա-
րագրեց Բաթումի յարմարութիւնները արտաշա-
նութեան գործի համար, սակայն Փօթիի նաւա-
նանցիտար մեծացնելու գործը, որի համար ան-
հրաժեշտ գումարը և նախագծերն արդէն պա-
տրաստ են, կրիայի քաղաքով է առաջ գնում:
Յամենայն դէպս, անհրաժեշտ է լուրջ ուշա-
դրութիւն դարձնել այն հանդամանքի վրա, որ
Փօթիի կարող է կորցնել իր նշանակութիւնը
ներօպայտում և ոչ մի չնգնեման չի մտնի նաւա-
նանցիտար աշխատանքի և ձմերային ամիսներին,
եւր ընտելիման այնպէս վնասներ է հասցնում
նրանց: Կայ և մի այլ վնաս, որ հասնում է վե-
րոյիշեալ հանգամանքից: Մօտ 300 բանուոր
ձեռքեր, անգործ մնալով չաբաթների ընթաց-
քում՝ հարկադրված են լինում ժամանակ ան-
ցնել զանազան օղիտներում և սրճարաններում,
որ դառն քրտինքով աշխատած կօպէկները
ծախելով՝ մնում են դատարկաձեռն՝ ապագայ
աշխատանքի յոյսով: Չեն յիշում այստեղ այն
հասարակ վնասները, որ հասնում է թէ՛ երկա-
թուղուն, թէ՛ քաղաքին և թէ՛ առհասարակ վա-
ճառականներին:

Ստ. Մաղմանեան

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՈՐԾԵԱՆ

Թէոդոսիա, փետրվարի 17-ին

Խոյրում եմ «Մշակի» մօտակայ համարներից
միում մի անկիւն շնորհէ հետեւեալին:

«Մշակի» № 25-ում իմ՝ Թէոդոսիայից գրած
համակի մի քանի կէտերի աւելիով տարածա-
նութիւններ լսելով՝ շտապում եմ պարզել թիւրի-
մացութիւնները, որպէս զի թէ՛ ներկայումս և թէ՛
ապագայում անմեղներին մեղաւոր չը ճանաչեն
ու հալածեն... Վերոյիշեալ համարում, ի միջի
այլոց, գրել էի... Քարոզ խօսեց Խորեն ե-
պիսկոսոս Ստեփաննէն, և ամեն անգամ դառ-
նալով դէպի պատկերը, նրան օրինակ առնելով՝
յանդիմանեց շատերին, ժառանգեց հոգևո-
րակ անհրաժեշտ, որոնք ի չարն են գործ
դնում Մեծ մարդի ու բարոյաւոր վարդապե-
տութիւնը... և այլն:

Յամարմանեց հոգեւորականներին՝ այսինքն
համեմատելով Յիսուսի խօսքերն ու գործերը
զանազան դասակարգելով և հոգեւորականների
խօսքերի և գործերի հետ և անհամապատաս-
խան գտնելով այս բոլորը՝ բերեց աւետարանի
այդպիսիներին դատաւարտող խօսքերը: Օրի-
նակ, հոգեւորականների մասին խօսելով՝ ասաց.
«Նայելով մեր խօսքին ու գործին, անշուշտ մե-
ղանք իւրաքանչիւրը կը յիշէ Փրկչի դատա-
ւարտող խօսքերը. «Այս ձեզ դպրաց և փարի-
սեցից կեղծաւորաց» և այլն...

Որքանի պարզ է, որ այս խօսքերը, ոչ մէկ
անհատի առանձին էջ վերաբերում, այլ ընդ-
հանուր մտքով է ասված...

Գալով «Մեծ մարդ» խօսքին՝ պէտք է ասեմ,
որ սրբազան բոլորովին գործ չէր դնում այս
խօսքը (կաւկասցիներ, որ հէնց աւետարանը Յի-
սուսին որդի մարդով է անուանում)՝ այլ ա-
մեն անգամ, յիշելով Յիսուսին, ասում էր.
«Փրկիչը», «Տէրն, մեր Յիսուս Քրիստոս» և այլն,
խօսքը այսպէս գործածողը եւս եմ՝ իմ կողմից:

Նայելով նաեւ իմ ամփոփ լինելու համար
կարճ էի գրել. հարկ եղած տեղը կարող եմ ե-
պիսկոսոսի խօսքերը բառացի հրապարակ հա-
նել, որպէս զի որոշ նպատակի, որոշ դասա-
կարգի մարկանց կապկածը փարատվի:

Ս. Խանոյեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետեւեալ համարը այսօրվայ տօնի
պատճառով չի հրատարակվի վաղը, ուրբաթի օր,
այլ լոյս կը տեսնէ շաբաթի օր, փետրվարի 27-ին:

Թիֆլիսի նահանգապետը, համաձայն ներքին
գործերի մինիստրութեան շրջաբերականին, ա-
ռաջարկեց է թիֆլիսի բոլոր բարեգործական
հիմնարկութիւններին՝ այսուհետ և ներկայացնել
տարեկան երկու անգամ հաշիւ նոր մշակված
ձևով: Այդ ձևից մի-մի օրինակ ուղարկվել է
հայոց Բարեգործական ընկերութեան և Հրատա-
րակական ընկերութեան՝ Նոր ձևը պարունա-
կում է 44 յօդուած, որոնց ամեն մէկին պէտք
է պատասխանել և որոնց հիման վրա կարելի է
կազմել լրակատար գաղափար ընկերութիւնների
ներկայիս վիճակի և գործունէութեան մասին:

«Times» լրագրին հեռագրում են Կ. Պօլսից,
որ մեծ վեզիրը պաշտօնապէս խոստացել է աւ-
ստրիական դեսպանին, թէ կատարեալ անաշա-
ռութիւն պէտք է պահպանել. Թիւրքիայի եւրօ-
պական նահանգների զանազան ազգութիւնների
մէջ տեղի ունեցող ընդհարումների ժամանակ:
Հայաստանում, Վան քաղաքի մօտ, սաստիկ սող
է: Բնակիչները մեռնում են, չը ստանալով ոչ
մի կողմից օգնութիւն:

«Մշակի» մէջ մենք հաղորդել էինք, որ Ալեք-
սանդրօպօլի գաւառի Մեծ-Վարաբլիսա գիւ-
ղում երեւցել է մրգատու ծառերի վրա մի վը-
տանդաւոր հիւանդութիւն: Այդ առիթով գրում
է մեզ Մ. Ճանեմեան Բաթումից հետեւեալը. «Հիւ-
անդութիւնն զէմ ամենանպատակալարմար մի-
ջոցն է՝ ծառի բունը պատել հանդգրած կրով:
Դրա համար պէտք է կիրը հաղցնել ջրի մէջ և
մի վրձինի միջոցով տաք-տաք ձեփել այդ կրով
ծառի կեղերը: Եթէ յորդ անձրիից յետոյ կիրը
անցնի՝ պէտք է քսել նորից»:

Մեր երկրի արդիւնները վերաբերութեամբ
վերջին տեղեկութիւնները հետեւեալն են ասում.
Հացահատիկների գինը եւրօպական զըխա-
ւոր վաճառանոցներում՝ Լոնդոնում, Բերլինում,
Համբուրգում՝ փոքր ինչ ինչ է. բուրգի գինը
չէ բարձրանում. սակայն առնողներ սկսել են
երեւալ: Մարտի 1-ի վաճառանոցում փետրվարի
սկզբին Խորասանի բուրդը ծախվում էր՝ 8P
մարկա ունեցողը 1,85 ֆրանկ, 8P 0,95 ֆրանկ:
Բամբակի գինը ցոյց է տալիս բարձրանալու
հակում. թէ՛ Լոնդոնում և թէ՛ Նիւ-Եօրկում բամ-
բակը ծախվեց աւելի թանկ գնով քան անցեալ
ամսում: Զիթ ահատիկների գինը բար-
ձրացել է պուրին 3—4 կօպէկ արտասանումում:
Մսացու կենդանիների գինը Թիֆլիսում այլ
ևս չէ բարձրանում: Սպասում են թաղիչ աղ-
բանքի գալուն, որ այս տարի լաւ եղանակի
պատճառով աւելի վաղ կը սկսվի, քան նախորդ
տարիները: Թաղիչ աղբանք կոչվում է այն, որ
գալիս է Լեւոքորանի գաւառից և Կուր գետի
ստորին ափերից:

Ներքաբլի, փետրվարի 23-ին, կովկասեան
Գիւղատնտեսական ընկերութեան մէջ տեղի ու-
նեցաւ ընկերութեան անդամների խորհրդակցու-
թիւն պաշտօնական անձերի ընտրութեան մա-
սին: Փոխնախագահութեան համար թեկնածու-
ներ առաջարկվեցին հետեւեալ անձինք՝ Իշխան
Գրուզինսկի, Իշխան Ն. Անդրոնիկով, Սուլտան
Կրիմ-Գիրէյ, Գանձապահի և քարտուղարի պաշ-
տօնների համար առաջարկվեցին նախկինները,
այն է Ա. Նւանգուլով և Ի. Իսախանի:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալը. Պե-
տերբուրգի «Հայկական երեկոյթի» կարգա-
դրչները խորին շնորհակալութիւն են յայ-
տնում ստորև յիշված անձանց, որոնք իրանց
ուղղված հրապարտութեան համար չեն զրացել
յօդուած Պետերբուրգի չքաւոր հայ ուսանող-
ների ուղարկել իրանց նուրբները Ա. Ի. Մանթա-
շեան—100 ռ., Մ. Օ. Արամեան—100 ռ., Ա.
Մատուրեան—100 ռ., Լ. Ս. Բաստաբեան—25
ռ., Սմբատ Եանգիլ—25 ռ., Ա. Ա. Մելիք-Ա.
գարեան—25 ռ., Ա. Գ. Մովսիսեան—20 ռ.,
Ի. Ս. Թումանեան—20 ռ., Ար. Ն. Միլով—
15 ռ., Ի. Ի. Մովսիսեան—15 ռ., Գ. Ս. Տէր-
Ստեփանեան—10 ռ., Ե. Ա. Մատուրեան—10
ռ., Ե. Ի. Փուլիսեան—10 ռ., Ա. Ա. Մատու-
րեան—10 ռ., Յ. Տ. Տիգրանեան—10 ռ., Մ.
Ի. Դուրախանեան—10 ռ., Ա. Ս. Ունանեան—10
ռ., Գր. Օ. Մանթաշեան—10 ռ., Ս. Մ. Գրի-
գորեան—10 ռ., Ա. Ա. Խախուրեան—10 ռ.,
Պ. Ա. Քալանթարեան—10 ռ., Յ. Ս. Սպե-
րիան—5 ռ., Ք. Ս. Բեկդաշեան—5 ռ., Ե.
Ս. Տէրեան—5 ռ., Ի. Ե. Փիթոյի—5 ռ.:

Մեղրիի մեզ գրում են. «Մեր հասարակու-
թիւնը իւրաքանչիւր տարի կերօսինի վաճառ-
ման իրաւունքը՝ հասարակութեան համաձայնու-
թեամբ որոշած գներով կապալով յանձնում էր
գիւղացիներին մէկին, որ տարվայ ընթացքում
կերօսին մատակարարէ հասարակութեան: Այս
տարի նոյնպէս կապալով են տուել և գների
վերաբերմամբ այնպիսի որոշում են կայացրել,
որ փոքր ի շատէ հասարակական խնդիրներով
հետաքրքրվող մարդուն չէր կարող ցաւ չը
պատճառել: Որոշված է այսպէս. 10 ֆունտ կե-
րօսին վերցնող պէտք է վճարէ ֆունտին 6
կօպէկ, իսկ 10 ֆունտից պակաս վերցնողները
61/2 կօպէկ: Ակամայ հարց է ծագում. ի՞նչ
է նիւթապէս տուժողը, եթէ ոչ մէք չքաւոր դասա-
կարգը: Հարուստը, ունեւորը 10 ֆունտից պա-
կաս չէ վերցնում, իսկ չքաւորը, որ միանուաղ
անկարող է 60 կօպէկ վճարել՝ ֆունտով է
դնում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԻՍՏՐ ՊԱՆԱՆՁ

Ներկայումս Անգլիայում յուզվում է մի հարց,
որ ոչ միայն գործման, այլ և բարոյական-
պրինցիպական հասարակ նշանակութիւն ունի:
Փետրվարի 3-ին պարլամենտում երկար վիճա-

րանութիւններ տեղի ունեցան պատգամաւոր
Մակ-Նէյլի յարուցած այս առաջարկութեան ա-
ռիթով. «Տնարաւոր է արդեօք, որ պետական
գործիչը, պաշտօնեան, մինիստրը մի և նոյն
ժամանակ վարէ մասնաւոր ընկերութիւնների
դիրեկտորի պաշտօնը: Բանից դուրս է գալիս,
որ անգլիական այժմեան մինիստրութիւնը կազ-
մող 44 մինիստրներից 25 հոգի վարում են 41
վերատեսչական պաշտօն զանազան բանկային և
կապիտալական ընկերութիւնների մէջ. մի քանի
պատգամաւորներ գտնում են, որ կառավարու-
թեան մինիստրի համար անվայել է անպատ-
շաճ է այդպիսի պաշտօններ վարելը, որովհետեւ
այդ հանգամանքը կարող է ստորացնել քաղա-
քական գործիչի ընդհանուր արժանաւորութիւ-
նը: «Մինիստրները—ասաց պատգամաւորնե-
րից մէկը—պէտք է խոյս տան բոլոր այն գոր-
ծերից, որոնք կարող են որեւէ կասկած յա-
րուցանել իրանց անհասարակութեան մասին:
Անգլիան կարողացել է մինչև այժմ, գտնէ վեր-
ջին 50—60 տարիների ընթացքում, պարծենալ
նրանով, որ նրա մինիստրները ոչ միայն կաշա-
ռական չեն եղել, այլ նոյն իսկ սպէկուլացիայի
միջոցով հարստութիւն չեն ձեռք բերել: Մենք
գիտենք, որ մի քանի ուրիշ երկրներում մարդիկ
մտնում են մինիստրութեան մէջ աղքատ, և
դուրս են գալիս հարուստ. մենք կը ցանկանանք
անվճար պահպանել մեր այդ համբաւը ոչ միայն
de facto, այլ նոյն-իսկ տեսականապէս»:

Վիճաբանութիւնների ժամանակ յայտնվեց, որ
մի քանի մինիստրներ վարում են դիրեկտորի
պաշտօն այնպիսի ընկերութիւնների մէջ, որոնք
նպատակ են տալիս կառավարութիւնից և
որոնց գործունէութիւնը պէտք է ենթարկվի
կառավարութեան վերահսկողութեան: Բացի դը-
րանից յայտնվեց, որ Գրադստօնի և Ռոզբէրիի
մինիստրութիւնները 1892 և 1894 թ. իրանց
համար անխախտ կանոն էին հաստատել, որ
մինիստրները ոչ մի ուրիշ մասնաւոր և ունեւա-
ւոր պաշտօն չը վարեն:

Ինչն ըստ ինքեան հասկանալի է, որ անգ-
լիական պարլամենտի մի քանի պատգամաւոր-
ների պահանջը, որ պետութեան մինիստրները
չը վարեն որեւէ մասնաւոր պաշտօն՝ ոչ միայն
վերին աստիճանի արդարացի է, այլ և անհրա-
ժեշտ պետութեան պատկէ և բարոյական համ-
բաւի համար: Որքան էլ այդ մինիստրները աղ-
նիւ, բարոյական լինեն՝ բայց նրանց դրութիւնը
խիստ կեղծ է և անկանոն. էլ չենք ասում, որ
կարող են պատահել այնպիսիները, որոնք կա-
րող են զայնպիսի կեղծ և զանազանութեան տալ
պետութեան շահերը: Եւ հէնց այդ պատճառով
Գրադստօն արգելել էր մի մինիստրութեան որ-
եւէ անդամին ստանձնել որեւէ մասնաւոր պաշ-
տօն: Ինչ պէտք է լինի այն մինիստրի դը-
րութիւնը՝ երբ յանկարծ յայտնվի, որ այն ըն-
կերութեան մէջ, որտեղ նա վերատեսչու է՝ կա-
ռավարել են գեղծումներ մի քանի պաշտօնեանե-
րի կողմից: Անգլիական պարլամենտը, ի հարկէ,
մեծ լրջութեամբ վերաբերվեց այդ հարցին և
մինիստր Բալֆուրի առաջարկութիւնները, որոն-
ցով նա աշխատում էր պաշտպանել իր պաշտօ-
նակիցներին՝ անկարող եղան համոզել պարլա-
մենտին, որ ընդունված կարգը լաւագոյնն է:
Սակայն պարլամենտը անուժեղ թողեց այդ
հարցը, որովհետեւ Սոյսբերիի ներկայ մի-
նիստրութիւնը, անձնական պատուի շօշափումն
նկատելով այդ հարցի մէջ՝ վստահութեան խն-
դիր առաջարկեց. պարլամենտը չուզեց մինիս-
տրական ձգնաժամ յարուցանել և մերժեց պատ-
գամաւոր Մակ-Նէյլի առաջարկը 247 ձայնով
ընդդէմ 143-ի. սակայն շնորհիւ վիճաբանու-
թիւնների և անգլիական մասնաւոր՝ այդ հարցը
այնքան կարեւորեցին և ստացել, որ մինիս-
տրութիւնը ինչն որոշեց, ինչպէս հաղորդում են
անգլիական լրագիրները, պահպանել Գրադստօ-
նի և Ռոզբէրիի մինիստրութիւնների կանոնը և
թող չը տալ, որ պետական մինիստրը որեւէ
այլ մասնաւոր պաշտօն վարէ:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՅ

Սալմաստ, փետրվարի 1-ին

Միջան Բաղդասարեանի գործը ծանօթ է
«Մշակի» ընթերցողներին. անգլիական հիւպա-
տոսի միջոցով նրա պահանջած երկու հարիւր
թուան վնասը վերջապէս Ամիր Նիզամը բա-
րեհաճեց վճարել, բայց դիտել ինչ միջոցով...
Անցեալ շաբաթ տեղիս սարկափարստը, հանրա-
ծանօթ Իրայի Գովան (Միրզա Հուսէյն խանը)
հեռագրել է ստանում Ամիր Նիզամից՝ Մահլաւ
և Նրա չրջակայ հայաբնակ գիւղերից հօքման
(ստիպմամբ) առնել երկու հարիւր թուան և
վճարել պ. Բաղդասարեանին. սարկափարստն էլ,
քանի որ հրամանը բարձր է՝ առնելու է հօք-

ման այդ գումարը յիշեալ և չրջակայ գիւղերից:
Բայց թէ ինչո՞վ են յանցաւոր մահլաւցիք Միհ-
րան էֆէնդու գործում, այդ միայն Ալաշը
գիտէ:

Գարձեալ «դաշայններ» մասին է, որ գրվում
է, դարձեալ խուզարկութիւն, պարսիկ կառա-
վարութեան լաւ սերտած հանապազօրեայ երգը:
Իբրեւ հաստատ տեղեկութիւն խօսվում է թէ՛
հայտնեաց Միրզա Ալիխանը մի քանի օրից յե-
տոյ գալու է այստեղ խուզարկութեան՝ «դաշադ-
ներ» փնտռելու և ձերբակալելու... Բայց ար-
դեօք «դաշայններ» որոնելու համար է, թէ խեղճ,
ուժասպառ եղած սալմաստցիներին կողոպտե-
լու, թալանելու համար: Պարսիկ կառավարու-
թիւնը իր համար լաւ պատրուակ է դարձրել
դաշայններին՝ ամեն տարի դարնանը սալմաստ-
ցիներից հաղաբաւոր թուամանի կողքելու հա-
մար:—Ինչ երէկ էր, որ Վալասար և Փայա-
ջուկ գիւղերը աւելի քան երեք հազար թուաման
տուժեցին մի հոտած լէշի պատճառով. երէկ էր,
որ Սաւրան հազիւ ազատվեց Մաշադի Քաղու-
կեղեղող ճանկերից, ահապէս զրկանքներ կրե-
լուց յետոյ, դեռ երէկ էր, որ Մահլաւն ու
Հաւթիւնը անտեղի հարկերի վճարելուց հա-
զիւ չուէն են աւել մի փոքր՝—Ամիր Նիզամը
իր հրոսակախումքն է ուղարկում Սալմաստ,
խուզարկութեան անուան տակ, կողոպտու տա-
նելու համար... Բայց այս անգամ էլ կը կարո-
ղանան սալմաստցիք Միրզա Ալի խանի և այլ
նրա նմանների անպատակ գողանքները լցնել...

Իսկապէս, բառի բուն նշանակութեամբ, ան-
տանելի է դառն սալմաստցիների դրութիւնը:
Կառավարութեան կեղեքումներն մի կողմից,
միւս կողմից էլ բնիկ պարսիկների, սալմաստ-
ցիների լեզուով ասած՝ շառչուները վերջ
չունեն: Ամեն օր տառնեակներով հայեր կառա-
վարութեան դուռն են տարվում պարսիկների
յարուցած կալուածական և այլ զանազան ան-
տեղի և անիրաւացի պահանջներին համար. երե-
ւակայեցեք, մի հայ 60—70 տարի առաջ մի
կալուածք է աւել. այժմ որտեղից որտեղ մի
բարեպաշտ մուսուլման դուրս է գալիս իր իրա-
ւունքները յայտնում այդ կալուածքի վրա...
Կառավարութեան ցանկացածն էլ այդ է՝ մա-
դախը (եկամուտ) անելու համար: Երբն օր
խեղճ հային տանում են, երբուռ, վերքը մի քա-
նի տառնեակ թուաման առնելով՝ արձակում են...
Եւ այդ տեսակ գործեր ամեն օր կան ու կան...

Այս բոլորից սալմաստցիները վերջին ծայր
յուսահատութեան են հասել. բազմաթիւ ընտա-
նիքներ պատրաստվում են առաջիկայ գարնան
Խուսառտան գաղթելու և թէ՛ կառավարու-
թեան այս ամենօրեայ կեղեքումների առաջը
չառնվի՝ հաւատացած ենք, որ 1—2 տարուց
յետոյ Սալմաստում այլ ևս ոչ մի հատ հայ չի
մնայ...

Հրաւիրում ենք Քաւրիդի առաջնորդարանի
լուրջ ուշադրութիւնը, գտնէ մասամբ թեթեւա-
ցնելու սալմաստցու ծանր վիճակը: Առաջնորդա-
րանի անմիջական պարտաւորութիւնն է իր հո-
գածութեան առաջին դարձնել Սալմաստի
հայերի դրութիւնը, և այդ բանը կառավարու-
թիւնից հէնց արտոնված է նա անելու... Եթէ
չէ կարողանում մի բան անել՝ դրանով նա իր
անհրաժեշտութիւնն է ապացուցանում...

Ջարանդեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Polit. Corresp.» լրագրին հաղորդում են
Աթէնքից, որ անգլիացիները պաշտպանում են
մասնետական ժողովրդին Կրետէում և նպաս-
տում են այդ տարրի զարգացման: Այս նպա-
տակով անգլիացիները աշխատում են համոզել
Փոքր-Ասիա գաղթած մասնետականներին՝ վե-
րադառնալ Կրետէ կղզին և իր թէ՛ անհրաժեշտ
միջոցներ են հայթայթել նրանց:

Պարսից հեռագրում են, թէ չը նայելով որ
սենատը ընդունեց Լեբէի օրէնքը՝ այնու ամե-
նայնիւ վերաբնութեան կողմնակիցները հաւա-
տացած են, որ ճշմարտութիւնը կը յաղթանակէ
շնորհիւ այն հանգամանքի, որ դատը քննվելու
է հրապարակօրէն վճռալինջ դատարանում:

Կ. Պօլսից գրում են, որ գերմանական գաղ-
թականութիւնը Փոքր-Ասիայում մեծ ծաւալ է
ընդունում: Զը նայելով որ Վիլհելմ II կայսրի
հպատակները այժմ Թիւրքիայում աւելի շատ են,
քան որեւէ ազգութեան գաղթականները՝ բայց
դարձեալ սուլթանը հրամայել է ընտրել նոր
պետաւոր տեղեր՝ Գերմանիայից սպասվող նոր
գաղթականներին համար:

Խոսակալական կառավարութեան և Վատիկա-
նի մէջ յարաբերութիւնները քննարկելու արդիւնք
է, որ Հռոմում Ֆէլիքս Փօրի համար կատարված
հոգեհանգստի ժամանակ, պապի քարտուղար
կարդինալ Բ

